Ազգանուն, անուն, հայրանուն Մարաբյան Սերգեյ Ռուբիկի

Ծննդյան տարեթիվը 03.10.1981թ.,

Ծննդավայր Վրաստանի Ախալքալաքի շրջան, գ. Խոսպիո

Կրթությունը Բարձրագույն

1999 – 2003թթ. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետ բակալավրիատ
2004 - 2006 թթ. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետ մագիստրատուրա
2007 – 2012 թթ. ԵՊՀ ասպիրանտուրա
2014 թ. Հայաստանի Հանրապետության արդարադատության ակադեմիա
2022 թ. Հայաստանի Հանրապետության արդարադատության ակադեմիա

Լեզուներ Հայերեն, անգլերեն, ռուսերեն

Գիտական աստիճան, կոչում
Իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

Աշխատանքային (մասնագիտական) գործունեություն

2007-2008թթ. ՀՀ վճռաբեկ դատարանի աշխատակազմի իրավական փորձաքննությունների վարչության կրտսեր մասնագետ

2008 թ. ՀՀ վճռաբեկ դատարանի դատավորի օգնական

2008 թ. ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական փորձաքննությունների վարչության գլխավոր մասնագետ

2008-2010 թ. ՀՀ դատական դեպարտամենտի կազմակերպաիրավական վարչության պետ

2007 - 2012 թթ. Լորիս Քալաշյանի անվան Հայկական Բաց համալսարանում՝ որպես դասախոս

2008- մինչ այսօր տարբեր ծրագրերի շրջանակներում հանդիսացել և հանդիսանում է Եվրոպայի խորհրդի, ՅՈՒՆԻՍԵՖ-ի և այլ միջազգային կազմակերպությունների ազգային փորձագետ

2008 - 2013 թթ. «Դատախազության դպրոց» ՊՈԱԿ-ում՝ որպես դասախոս

2009 - 2012 թթ. «Դատական Դպրոց» ՊՈԱԿ-ում՝ որպես դասախոս

2012 - 2013 թթ. Եվրասիա միջազգային համալսարանում՝որպես իրավագիտության ամբիոնի վարիչ

2013թ-մինչ այսօր փաստաբանական դպրոցի, ապա փաստաբանական ակադեմիայի դասախոս

2012-2013 թթ. ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահի խորհրդական

2013 թ. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի դատախազության ավագ դատախազ

2013 - 2014 թթ. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության՝ դատարաններում մեղադրանքի պաշտպանության և դատական ակտերի բողոքարկման վարչության պետի տեղակալ

2014 - 2016 թթ. ՀՀ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր

2016-2018 թթ. Երևան քաղաքի առաջին անտյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր

2012 - 2019 թթ. ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի ասիստենտ

2019 թ-ից առայսօր ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ

2018 թ.ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դատավոր,

2023 թվականի հունիսից ՀՀ հակակոռուպցիոն վերաքննիչ դատարանի դատավոր,

2023 թվականի դեկտեմբերից մինչև 2024 թվականի մարտը ՀՀ վճռաբեկ դատարանի դատավոր

2020-2024 թվականը ՀՀ դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի նախագահ

2024 թվականի մարտի 18-ից ՀՀ փաստաբանների պալատի անդամ,

2024 թվականի մարտի 18-ից «Կոնցեռն Դիալոգ» ՓԲԸ խորհրդատու գործընկեր:

2025 թվականի մայիս ամսից «էթիկայի և դատական վարպետության հարցերով» ազգային փորձագետ՝ Շվեդիայի ազգային դատարանների վարչության կողմից իրականացվող՝ «Հայաստանի դատավորների կարողությունները զարգացնելու, արդարադատության համակարգի նկատմամբ նոր պահանջներին համապատասխանելու և այդ միջոցով հասարակության վստահությունը բարձրացնելու նպատակով» իրականացվող ծրագրի շրջանակներում:

Մասնակցությունը գիտական/մասնագիտական կառույցներին

ՀՀ դատավորների միության անդամ

Կարդացվող դասընթացներ

ԵՊՀ - «Քրեական դատավարություն» (սեմինար), «Գույքային հարցերը քրեական դատավարությունում» (դասախություն), «Ապացույցների տեսության հիմնախնդիրները ՀՀ

քրեական դատավարությունում» (դասախություն), «Քրեադատավարական էթիկա» (դասախություն)

Արդարադատության ակադեմիա- «Քրեական դատավարության արդի հիմնահարցեր», «Դատական էթիկա և դատական արհեստ», «Դատական նիստ վարելու գործնական հմտություններ»

Փաստաբանական ակադեմիա- «Անչափահասների արդարադատություն» և «Վերաքննիչ և վճռաբեկ բողոք կազմելու գործնական հիմնահարցեր»:

Գիտական ատենախոսության թեմա

«Քաղաքացիական հայցի հիմնախնդիրները ՀՀ քրեական դատավարությունում» ի.գ.թ., ԺԲ.00.04- «Դատական իրավունք-դատարանակազմություն, քաղաքացիական դատավարություն, քրեական դատավարություն, կրիմինալիստիկա, դատական փորձաքննություն, փաստաբանություն, օպերատիվ-հետախուզական գործունեության տեսություն»

Գիտական հետազոտությունների շրջանակ

Քրեական դատավարությունում քաղաքացիական հայցի հիմնախնդիրները, տուժողի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը, ձերբակալման հարցերը, խափանման միջոցների կիրառման հիմնահարցերը, դատական ակտերի վերանայման հարցերը, ապացուցման հիմնահարցերը, անչափահասների արդարադատության հարցերը, դատական էթիկայի հարցերը:

Մասնագիտական գործունեության նկարագիրը.

Շուրջ տասնամյա գործունեություն ծավալելով որպես **քրեական մասնագիտացմամբ դատավոր**, մշտապես առաջնորդվել եմ արդար դատաքննության, անմեղության կանխավարկածի, իրավունքի գերակայության և մարդու հիմնարար իրավունքների պաշտպանության սկզբունքներով՝ նպատակ ունենալով ապահովել յուրաքանչյուր անձի իրավունքների լիարժեք իրացումը և դատական համակարգի նկատմամբ հանրային վստահության ամրապնդումը: Իմ դատական պրակտիկան կենտրոնացած է եղել այնպիսի գործերի վրա, որոնք ուղղակիորեն առնչվում են անձի ազատության, արդարացի վարույթի, պաշտպանական իրավունքների իրացման և պատշաճ ընթացակարգի ապահովմանը: Դատավորի պաշտոնում որդեգրել եմ մարդու իրավունքների և ազատությունների երաշխավորման, արժանապատվության, հավասարության և արդարության սկզբունքների վրա հիմնված դատական վարքագիծ՝ նպաստելով դատական իշխանության նկատմամբ հանրային վստահության ամրապնդմանը:

Միևնույն ժամանակ, որպես **դասախոս քրեական դատավարության և դատական էթիկայի ոլորտներում**, ես իրականացնում եմ իրավաբանական կրթական և գիտական գործունեություն՝ ուղղված ապագա դատավորների, դատախազների և փաստաբանների մասնագիտական կարողությունների զարգացմանը: Դասավանդման ընթացքում հատուկ

շեշտադրում եմ կատարում մարդու իրավունքների պաշտպանության միջազգային ստանդարտների, Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի և արդար դատաքննության իրավունքի կիրառական ասպեկտների վրա:

Իբրև **փաստաբան քրեական գործերով**, իրավական օգնություն եմ ցուցաբերել մեղադրյալների և տուժողների իրավունքների պաշտպանությանը միտված գործերում՝ ապահովելով պաշտպանության արդյունավետություն, արդարացի դատաքննության իրավունքների իրացում և գործի օբյեկտիվ քննություն: Այս գործունեությունը հիմնված է եղել ոչ միայն մասնագիտական իրավական գիտելիքների, այլև բարձր էթիկական չափանիշների վրա՝ նպատակ ունենալով պաշտպանել անձի օրինական շահերն ու արժանապատվությունը:

Բացի այդ, որպես **էթիկայի և կարգապահական հարցերով հանձնաժողովի անդամ**, մասնակցել եմ դատավորների էթիկական վարքագծի գնահատման, բարեվարքության սկզբունքների պահպանման և դատական գործունեության նկատմամբ հանրային վստահության բարձրացմանն ուղղված գործընթացներին: Այս պաշտոնում իմ դերակատարությունը կապված է եղել ոչ միայն վերահսկողական, այլև կանխարգելիչ գործառույթների իրականացման հետ՝ նպատակ ունենալով ձևավորել պատասխանատու, ազնիվ և իրավական արժեքներով առաջնորդվող դատական մշակույթ: Միևնույն ժամանակ, նպաստելով դատական գործունեության նկատմամբ հանրային վստահության բարձրացմանը:

Վերջին տարիներին իմ մասնագիտական գործունեության առանցքում է դատական էթիկայի և դատավորի վարպետության խորքային հետազոտությունը, որը համադրում է ինչպես գիտական վերլուծություն, այնպես էլ գործնական մեթոդաբանական մոտեցումներ:

Ներկայում իրականացնում եմ խորը գիտական և գործնական ուսումնասիրություն դատական էթիկայի ոլորտում՝ Շվեդական ազգային դատական վարչության ծրագրի շրջանակներում: Այդ ծրագրի շրջանակներում մշակել եմ **«Դատական էթիկա և դատավորի վարպետություն»** թեմայով վերապատրաստման դասընթաց, իրականացրել եմ բազմաթիվ վերապատրաստումներ և ներկայում մշակում եմ գործնական ուղեցույց՝ **դատական էթիկայի կիրառական հարցերի վերաբերյալ**, որը միտված է դատավորների էթիկական ինքնագիտակցության, պատասխանատվության և մասնագիտական արժանապատվության ամրապնդմանը:

Այս ամբողջ գործունեությունը միավորվում է մեկ ընդհանուր առանցքի շուրջ՝ մարդու իրավունքների և արժանապատվության պաշտպանությունը որպես իրավական պետության և արդարադատության համակարգի հիմնարար արժեք:

Սերգեյ Ռուբիկի Մարաբյան